ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

211

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

«19» հոկտեմբեր 2022թ.

40/06249ԴՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ No. 2801-Ա

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ ԱՐՍԵՆ ԳԱՐԵԳԻՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ N 3529/2022/ԿՈՒՎ4/Ա արձանագրության (արձանագրությունը կցվում է) ֆիզիկական անձ ԱՐՍԵՆ ԳԱՐԵԳԻՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ /Հասցե՝ ԵՐԵՎԱՆ, ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 4 Փ., 41Տ, ՀՎՀՀ՝ 27984345, ՀԾՀ՝ 2412640130/ չկատարված հարկային պարտավորությունը 07.07.2022թ. դրությամբ կազմել է 761.757 դրամ, որից հարկ՝ 738.709 դրամ, տույժ՝ 23.047 դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունը գանձելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու նպատակով 29.09.2022թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

Համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տեղեկությունների՝ ֆիզիկական անձի կողմից ք. Երևան, Աջափնյակ Հաղթանակի 1-ին փողոց 1-ին նրբանցք 8/2 հասցեում գտնվող անշարժ գույքը 20.05.2021 թվականից մինչև 1/մեկ/ տարի ժամկետով ամսական 1.000.000 ՀՀ դրամ պայմանագրային արժեքով տրամադրվել է վարձակալության:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 140-րդ հոդվածի՝ ֆիզիկական անձը հանդիսանում է եկամտային հարկ վճարող, 141-րդ հոդվածի վերոնշյալ գործարքը համարվում է եկամտային հարկով հարկման օբյեկտ: Համաձայն Օրենսգրքի 150-րդ հոդվածի 7-րդ կետի, վարձակալական վճարների մասով եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով, իսկ հարկային տարվա ընթացքում ստացված վարձակալական վճարների հանրագումարը 60,0 մլն. դրամը գերազանցելու դեպքում, գերազանցող մասի համար ֆիզիկական անձը հաշվարկում է լրացուցիչ եկամտային հարկ 10% դրույքաչափով:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57

Համաձայն Օրենսգրքի 269-րդ հոդվածի 1-ին մասի, եթե ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների վարձակալական պայմանագրի կողմ հանդիսացող տնտեսվարող սուբյեկտը՝ ՀՀ հարկային օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն համարվում է միկրոձեռնարկատիրության սուբյեկտ, ապա միկրոձեռնարկատիրության սուբյեկտներն ազատվում են միկրոձեռնարկատիրության մասով առաջացող բոլոր պետական հարկերի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից (այդ թվում՝ որպես հարկային գործակալ՝ հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից, ինչպես նաև օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված՝ շահութահարկի կանխավճարների կատարման պարտավորությունից), բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի: Հետևաբար՝ ֆիզիկական անձի հետ վարձակալական պայմանագիր կնքելու դեպքում՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտն ազատվում է ֆիզիկական անձին վճարվող վարձավճարներից եկամտային հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե վճարելու հարկային գործակալի պարտավորությունից:

Ֆիզիկական անձ ԱՐՍԵՆ ԳԱՐԵԳԻՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ կողմից չի ներկայացվել 2021 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ և չի վճարվել եկամտային հարկի գծով պարտավորությունը:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված պարտավորությունը 07.07.2022թ. դրությամբ կազմել է 761.757 դրամ, որից հարկ՝ 738.709 դրամ, տույժ՝ 23.047 դրամ:

Հարկերը հաշվարկվել են Օրենսգրքի 150-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված կարգով, տույժերը՝ Օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով :

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասին 64-րդ, 66-րդ կետերով, 398-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, <<Հարկային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 55, 56, 58, 59, 88 հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ֆիզիկական անձ՝ ԱՐՍԵՆ ԳԱՐԵԳԻՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՑ գանձել 761.757 դրամ պարտավորության գումար համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

07.07.2022թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	20.04.2022թ	738.709	23.047		761.757	պետական բյուջե	900008000490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____

Ստորագրություն հարկ վճարողի /կամ նրա օրինական/ ներկայացուցչի անուն ազգանուն ամսաթիվ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝
Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Կատարող՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների
կոմիտեի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և
պարտավորությունների կատարման ապահովման բաժնի
առաջատար մասնագետ Մարիաննա Պետրոսյան, հեռ. 011-54-91-91 /91-86/: